

Համարը N 426 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004	Տեսակը Ինկորպորացիա Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Ստեփանակերտ Ընդունման ամսաթիվը 16.11.2004 Ստորագրման ամսաթիվը 16.11.2004 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

+ Փոփոխություններ և ինկորպորացիաներ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՐՏԱԶՐԵՐԻ ԵՎ ՑԱՄԱՔՈՒՐԴԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԼԱՆՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ, ՍՊԱՌՎԱԾ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ, ՀԱՆՔԱՀՈՐԵՐԻ ՈՒ ԲԱՑ ՀԱՆՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" Նոյեմբերի 2004թ.

N 426

ք.Ստեփանակերտ

ԿԵՐՏԱԶՐԵՐԻ ԵՎ ՑԱՄԱՔՈՒՐԴԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԼԱՆՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ, ՍՊԱՌՎԱԾ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ, ՀԱՆՔԱՀՈՐԵՐԻ ՈՒ ԲԱՑ ՀԱՆՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի 7-րդ կետին և 12-րդ հոդվածի 5-րդ մասի 17-րդ կետին համապատասխան՝ ԼՂՀ կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել կեղտա**ջրերի** և ցամաքուրդային **ջրերի** ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շոջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ ԼՂՀ կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի, ԼՂՀ առողջապահության նախարարության և իրավասու այլ մարմինների հետ համատեղ եռամսյա ժամկետում մշակել ու հաստատել ջրային ռեսուրսների թափվող կեղտա**ջրերի** թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան:

(2-րդ կետը փոփ. 28.03.2006 N 183)

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. Նոյեմբերի 16-ի
թիվ 426 որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՐՏԱԶՐԵՐԻ ԵՎ ՑԱՄԱՔՈՒՐԴԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԼԱՆՈՂ ՀՈՐԱՏԱՆՑՔԵՐԻ, ՍՊԱՌՎԱԾ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ, ՀԱՆՔԱՀՈՐԵՐԻ ՈՒ ԲԱՑ ՀԱՆՔԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀՈՍՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է կեղտա**ջրերի** և ցամաքուրդային **ջրերի** ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության տրամադրման կարգը:

2. Կեղտա**ջրերի** և ցամաքուրդային **ջրերի** ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործումն արտահոսքի նպատակներով թույլատրվում է ջրօգտագործման թույլտվությամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության, ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության, ԼՂՀ արտակարգ իրավիճակների վարչության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների եզրակացությունների, ինչպես նաև ընդերքօգտագործողի համաձայնության առկայության դեպքում:

3. Կեղտա**ջրերի** և ցամաքուրդային **ջրերի** ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման թույլտվությունը, որպես պարտադիր պայման, պետք է ներառի կեղտա**ջրերի** և ցամաքուրդային **ջրերի** թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակները, որոնց պահանջների ապահովման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է

ԼՂՀ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը:

4. Արգելվում է կեղտաջրերի և ցամաքուղիային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործումն արտահոսքի նպատակներով, եթե այն հանգեցնում կամ կարող է հանգեցնել ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրերի ստանդարտների խախտմանը:

5. Սույն կարգի պահանջները չեն տարածվում ԼՂՀ ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածում նշված ջրային ռեսուրսների կամ դրանց մասի օգտագործման վրա:

**ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան